Հոսթինգ ծառայության մատուցման պայմանները

Բաժանորդագրվելով Հոսթինգ ծառայությանը՝ Բաժանորդը պարտավորվում է չօգտագործել Հոսթինգ ծառայությունը որպես միջանցիկ (proxy) սերվեր:

Օպերատորը պարտավոր է իր պահեստային սերվերում պահպանել Բաժանորդի կայքում առկա տեղեկատվությունը սույն Հոսթինգ ծառայության մատուցման պայմանագրի լուծման օրվանից հաշված 6 ամիս:

Օպերատորը պատասխանատվություն չի կրում Բաժանորդի կողմից իր Կայքում տեղադրված բովանդակության համար:

Հոսթինգ ծառայության ամսական թողունակությունը բոլոր սակագնային փաթեթների համար սահմանափակվում է միայն Օպերատորի տեխնիկական հնարավորություններով:

Հոսթինգ ծառայության մատուցման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումը, որը չի հանդիսանում բաց կոդով ծրագրային ապահովում, Բաժանորդին տրամադրվում է միայն օգտագործման համար: Բաժանորդի կողմից այդպիսի ծրագրային կոդի պատճենահանումը և տարածումը արգելվում է:

Ծառայության վճարման կարգը

Հոսթինգ ծառայության դիմաց վճարումը կատարվում է տարեկան կտրվածքով՝ կանխավճարային համակարգով: Վճարումն իրականացվում է ոչ ուշ քան ծառայության ակտիվացման նախորդող օրը:

Հոսթինգ ծառայությունից օգտվելու համար Բաժանորդն ընտրում է իր նախընտրած Հոսթինգ ծառայության սակագնային փաթեթը և ներկայացնելով պահանջվող տեխնիկական տվյալները, ինչպես նաև իր անհատական տվյալները (անվանում, հասցե, փոստային ինդեքս, հեռախոսահամար, ֆաքս, էլեկտրոնային փոստի հասցե, անձնագրային տվյալներ, ՀՎՀՀ և այլն) ստորագրում է Հոսթինգ ծառայության մատուցման պայմանագիրը:

Հոսթինգ ծառայության մատուցման սկզբի օր է համարվում ծառայության տարեկան բաժանորդագրության սակագինը վճարելու օրը: Ծառայության մեկ օրվա գինը որոշվում է պայմանագրում նշված ծառայության տարեկան սակագինը բաժանելով տվյալ տարվա օրերի քանակին:

Եթե Բաժանորդը սկսել է օգտվել ծառայություններից, ապա Հոսթինգ ծառայության մատուցման առաջին օրը չի կարող ավելի ուշ լինել, քան ծառայությունից փաստացի օգտվելու առաջին օրը:

Ծառայության վճարումից հետո դրանից հրաժարման դեպքում Օպերատորը վերադարձնում է Բաժանորդի կողմից ծառայության չսպառված օրերի դիմաց վճարման մնացորդն՝ ըստ օրերի:

Ծառայության կասեցման և անջատման կարգը

Օպերատորը կամ Բաժանորդը կարող է միակողմանի հրաժարվել Հոսթինգ ծառայության մատուցման պայմանագրից այդ մասին 30 (երեսուն) օր առաջ գրավոր նամակով տեղյակ պահելով մյուս կողմին:

Եթե Բաժանորդի կայքի աշխատանքը կամ դրա միջոցով փոխանցվող տվյալները ծանրաբեռնում են Օպերատորի համակարգիչները կամ բերում են դրանց բնականոն աշխատանքի խաթարման, ապա Օպերատորն իրավունք ունի կասեցնել տվյալ Ծառայության մատուցումը, մինչև խոչընդոտող գործոնի ազդեցության դադարեցումը: Ծառայության կասեցման օրվանից հաշված երկու ամսվա ընթացքում սույն կետով նախատեսված կասեցման հիմքերի առկայության դեպքում Օպերատորն իրավունք ունի տվյալ ծառայության մասով միակողմանի լուծել Պայմանագիրը Բաժանորդին այդ մասին ծանուցելու պայմանով:

Եթե Բաժանորդը կամ երրորդ կողմը Բաժանորդի ծրագրի օգտագործման հետևանքով անընդհատ զանգվածային տեղեկատվության փոխանակում է իրականացնում, ինչը կարող է էականորեն ծանրաբեռնել միջազգային համակարգչային ցանցի աշխատանքը կամ սպառնալ այդ ցանցի անխափան աշխատանքին, ցանցի օգտվողների անձնական կյանքի պաշտպանվածությանը կամ համակարգչի աշխատունակությանը, Օպերատորն իրավունք ունի կասեցնել ծառայությունների մատուցումը մինչև խոչընդոտող գործոնի ազդեցության դադարեցումը: Զանգվածային տեղեկատվության փոխանակում է հանդիսանում, մասնավորապես, սակայն չսահմանափակված, միևնույն էլեկտրոնային հասցեից 10 և ավելի այլ էլեկտրոնային հասցեներին նամակների անդադար ուղարկումը: Այդպիսի զանգվածային տեղեկատվության փոխանակման հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասների համար պատասխանատվություն է կրում Բաժանորդը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այլ պայմաններ

Հնարավոր է առանց քանակական և ժամկետային սահմանափակումների իրականացնել անցում գործող տարեկան բաժանորդագրությամբ սակագնային փաթեթից միայն ավելի բարձր սակագնով՝ այլ տարեկան բաժանորդագրությամբ սակագնային փաթեթի: Ցանկացած հիմքով ժամկետից շուտ պայմանագրի միակողմանի դադարեցման դեպքում կանխավճարային սկզբունքով վճարված տարեկան վճարի գումարը հետ չի վերադարձվում:

Գործող սակագնային փաթեթի պայմանագրի ժամկետի ավարտից շուտ ավելի բարձր սակագնային փաթեթի անցնելու դեպքում գործող պայմանագրի ժամկետը չի երկարաձգվում, իսկ նոր սակագնային փաթեթի համար Բաժանորդը վճարում է չսպառված ամիսների համար հավելավճար ստորև նշված բանաձևով՝

Հավելավճար = (ավելի բարձր սակագնային փաթեթի տարեկան վճար x չսպառված ամիսների քանակ)/12 – (գործող սակագնային փաթեթի տարեկան վճար x չսպառված ամիսների քանակ)/12